ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<10>> հուլիսի 2024թ. N ՄՈ/303 -Ա

ք. Արմավիր

«ԱՐԵՎԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հասմիկ Առաքելյանի 2024 թվականի հուլիսի 8-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արևաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հասմիկ Առաքելյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2024 թվականի հուլիսի 12-ից օգոստոսի 15-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հասմիկ Առաքելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արևաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արևաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Գայանե Հովհաննիսյանին:
3. «Արևաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Գայանե

Հովհաննիսյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի հուլիսի 12-ից օգոստոսի 15-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Հասմիկ Առաքելյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 16-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-07-10 09:55:12 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**